

2024 թվականի չորրորդ եռամսյակում կենսաթոշակային ֆոնդերից Կայուն Եկամտայինի (CQFIX) եկամտաբերությունը կազմել է 1.1%, Պահպանողականինը (CQCON)՝ 1.6%, Հավասարակշռվածինը (CQBAL)՝ 1.9%:

2024 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերը ստեղծման պահից ունեցել են 7.9-8.1% եկամտաբերություն:

Կենսաթոշակային ակտիվների ընդհանուր արժեքը եռամսյակի ավարտին հասել է 509 միլիարդ դրամի, որից 122 միլիարդ դրամը կազմել է կառավարման արդյունքում ձևավորված եկամուտը:

Հայաստանում 2024 թվականի դեկտեմբերին 12-ամսյա գնաճը շարունակել է մնալ թիրախից ցածր տիրույթում՝ կազմելով 1.5%:

2024 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում FED-ը շարունակել է դրամավարկային քաղաքականության թուլացումը՝ իրականացնելով տոկոսադրույքի 50 բազիսային կետի կրճատում:



## **Համաշխարհային և տեղական շուկաներում վերջին զարգացումներ**

2024 թվականի չորրորդ եռամսյակում ԱՄՆ տնտեսությունը շարունակել է ցուցաբերել դիմակայունություն՝ արդյունքում տարին ամփոփելով 2.8% ՀՆԱ-ի աճով: Դոնալդ Թրամփի նախագահական հաղթանակից հետո ԱՄՆ բաժնային արժեթղթերը արժևորվել են՝ պայմանավորված հարկաբյուջետային քաղաքականության և կարգավորումների թուլացման շուրջ առկա լավատեսությամբ: Գնաճային բարձր միջավայրը, սակայն, պահպանվել է՝ ինչի արդյունքում Դաշնային պահուստային համակարգը(FED) նվազեցրել է տոկոսադրույքները երկու անգամ: Նախկին սպասումների համեմատ FED-ը կրճատել է 2025 թվականի համար վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցման կանխատեսումները՝ նախանշելով երկու նվազեցում, ինչի արդյունքում ֆինանսական շուկաներում մեծացել է անորոշությունը:

Ֆրանսիայում և Գերմանիայում քաղաքական անկայունության ֆոնին՝ Եվրագոտում մեծացել են ռեցեսիայի վերաբերյալ մտահոգությունները: Տնտեսական մարտահրավերների ֆոնին Եվրագոտում գործարար ակտիվության ցուցանիշը(PMI) գտնվել է տնտեսության կրճատման միջակայքում: Տնտեսական աճը խթանելու նպատակով եռամսյակի ընթացքում Եվրոպական կենտրոնական բանկը(ECB) նվազեցրել է տոկոսադրույքները՝ ընդգծելով խթանող քաղաքականության անհրաժեշտությունը:

Ճապոնիայի բաժնետոմսերի շուկան եռամսյակը ամփոփել է դրական արդյունքներով՝ հիմնականում պայմանավորված իենի արժեզրկման հետևանքով արտահանող ընկերությունների շահույթների աճով: Եռամսյակի ընթացքում Ճապոնիայի կենտրոնական բանկը վերաֆինանսավորման տոկոսադրույքը պահել է ամփոփոխ՝ պայմանավորված ընկերությունների հակասական ֆինանսական արդյունքներով և ընդհանուր դրական գործարար միջավայրով:

ԱՄՆ-ի հետ առևտրային լարվածությունը և կառավարության կողմից տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության վերաբերյալ անորոշությունը եռամսյակի ընթացքում բացասական ազդեցություն են ունեցել Չինաստանի տնտեսական աճի վրա: Նման զարգացումներով պայմանավորված մայրցամաքային Չինաստանի բաժնետոմսերը եռամսյակի ընթացքում գրանցել են 1.7% անկում:

ԱՄՆ բաժնետոմսերը 2024 թվականի չորրորդ եռամսյակը ամփոփել են 2.4% եկամտաբերությամբ: ԱՄՆ բաժնետոմսերի շարքում առանձնացել են գերխոշոր տեխնոլոգիական ընկերությունները (Magnificent Seven)՝ եռամսյակի ընթացքում

գրանցելով շուրջ 15.9% եկամտաբերություն: Սակայն, այս ընկերությունների գնահատումները գտնվում են իդեալականին մոտ տիրույթում (priced to perfection), ուստի որևէ բացասական գործոնի ի հայտ գալու պարագայում ֆինանսական շուկաների արձագանքը կարող է լինել էական բացասական:

ԵՄ և ՄԹ-ում տնտեսական ակտիվության դանդաղմամբ և ԱՄՆ նոր վարչակազմի տնտեսական քաղաքականության անորոշությամբ պայմանավորված՝ ԵՄ և ՄԹ բաժնային շուկաները եռամսյակն ամփոփել են բացասական արդյունքներով՝ համապատասխանաբար 1.7% և 0.2%:

Զարգացող երկրների բաժնետոմսերը 2024 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում գրանցել են 7.9% անկում:

Արտասահմանյան պարտքային արժեթղթերը եռամսյակը հիմնականում ամփոփել են բացասական արդյունքներով՝ պայմանավորված ԱՄՆ նոր վարչակազմի հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ անորոշություններով: Եռամսյակի ընթացքում արտասահմանյան պարտքային արժեթղթերից ոչ ներդրումային դասին պատկանողները (high yield) գրանցել են 0.4% անկում, իսկ ներդրումային դասին պատկանող (investment grade) արտասահմանյան պարտքային արժեթղթերը՝ 5.1% անկում:

Հումքային ապրանքները 2024 թվականի չորրորդ եռամսյակը ամփոփել են զրոյին մոտ բացասական եկամտաբերությամբ, որը պայմանավորված է եղել մի կողմից Չինաստանի տնտեսության թուլացման և համաշխարհային արդյունաբերության դանդաղման ֆոնին թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղների գների էական նվազմամբ, իսկ մյուս կողմից էներգակիրների գների արժևորմամբ:


Այս տարվա դեկտեմբերին 2025 թվականի տնտեսական աճի կանխատեսումները թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրների համար նվազել է՝ կազմելով համապատասխանաբար 1.7% և 4.2%:<sup>1</sup>

2024 թվականի դեկտեմբերին ԱՄՆ-ում, Եվրոգոտում և ՄԹ-ում տարեկան գնաճը բարձրացել է՝ կազմելով համապատասխանաբար 2.9%, 2.4% և 2.5% :

Հայաստանում 2024 թվականի ընթացքում 12-ամսյա գնաճը շարունակել է մնալ թիրախային մակարդակից ցածր տիրույթում՝ դեկտեմբերին կազմելով 1.5%:

<sup>1</sup> Bloomberg-ի մասնավոր բաղադրյալ կանխատեսումների մեդիան

**12 ամսյա գնաճը 2024թ դեկտեմբերին**




Հայաստանի կենտրոնական բանկն այս եռամսյակի ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցրել է 50 բազիսային կետով՝ դեկտեմբերի վերջի դրությամբ սահմանելով այն 7.0%:

Ակնկալվում է, որ Հայաստանի կենտրոնական բանկի կողմից տնտեսության զարգացման սցենարների մշտադիտարկման, իրականացվող համարժեք դրամավարկային

քաղաքականության և սպասվող մակրոտնտեսական զարգացումների արդյունքում 12-ամսյա գնաճը միջնաժամկետ հորիզոնում կկայունանա 4% մակարդակում:<sup>2</sup>

**Քաղաքականության տոկոսադրույքի փոփոխությունը ընթացիկ եռամսյակում**




2024 թվականի չորրորդ եռամսյակում զարգացած երկրներում գնաճը շարունակել է մնալ թիրախից բարձր միջակայքում: Զարգացած երկրների Կենտրոնական բանկերը նվազեցրել են վերաֆինանսավորման տոկոսադրույքները: Մինչդեռ ՌԴ Կենտրոնական բանկը բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 200 բազիսային կետով՝ պայմանավորված բարձր գնաճով և տնտեսության գերտաքացմամբ:

ԱՄՆ-ում, Եվրոգոտում և ՄԹ-ում եռամսյակի ավարտին քաղաքականության տոկոսադրույքը կազմել է համապատասխանաբար 4.5%, 3.15% և 4.75%:

<sup>2</sup> Աղբյուրը՝ Դրամավարկային քաղաքականության զեկույց (2024թ. 4-րդ եռամսյակ) Գնաճի թիրախը վերանայվել է ԿԲ-ի կողմից և 2025 թվականից սկսած սահմանվել է 3%, իսկ թիրախային միջակայք է սահմանվել 2%-4%-ը:

## Կենսաթոշակային ֆոնդերի և հիմնական շուկայական ինդեքսների եկամտաբերությունների 2024 թվականի դինամիկան<sup>3</sup>




<sup>3</sup> AMGOV\_5-10, AMGOV\_10-20, AMGOV\_201-ի համար աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են դրամային արտահայտությամբ: Մնացած արտասահմանյան ակտիվների աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):

## 2024 թվականի չորրորդ եռամսյակի եկամտաբերության մեկնաբանություն


2024 թվականի չորրորդ եռամսյակը կենսաթոշակային ֆոնդերի տեղական և արտասահմանյան բոլոր ներդրումները, բացառությամբ արտասահմանյան պարտքային պորտֆելների, ամփոփել են դրական արդյունքներով: Ընթացիկ եռամսյակում ամենաբարձր եկամտաբերությունը գրանցել են ֆոնդերի տեղական ներդրումներից կորպորատիվ պարտատոմսերը և ավանդները, իսկ արտասահմանյան ներդրումներից՝ բաժնային արժեթղթերը: Դրամի որոշակի արժեզրկումը դոլարի նկատմամբ ևս դրական ազդեցություն է ունեցել ֆոնդերի եռամսյակային եկամտաբերության վրա:

Նման զարգացումներով պայմանավորված՝ 2024 թվականի չորրորդ եռամսյակը կենսաթոշակային ֆոնդերը ամփոփել են դրական արդյունքներով: Ֆոնդերից Կայուն եկամտայինը (CQFIX) ունեցել է 1.1%, Պահպանողականը (CQCON)՝ 1.6%, Հավասարակշռվածը (CQBAL)՝ 1.9% եկամտաբերություն:


**CQFIX եռամսյակային եկամտաբերություն**



**CQCON եռամսյակային եկամտաբերություն**




**CQBAL եռամսյակային եկամտաբերություն**




2024 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ ֆոնդերի ակտիվների 67-73%-ը ներդրված է եղել Հայաստանում, այնպիսի ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են պետական և կորպորատիվ պարտատոմսերը, ավանդները, բաժնային արժեթղթերը և այլընտրանքային ներդրումները: Ակտիվների մնացած 27-33%-ը ներդրված է եղել արտասահմանյան բաժնային և պարտքային արժեթղթերում:


**CQFIX** ակտիվների կառուցվածքը



**CQCON** ակտիվների կառուցվածքը




**CQBAL** ակտիվների կառուցվածքը



- Ավանդներ և դրամական միջոցներ
- Տեղական կորպորատիվ պարտատոմսեր
- Արտասահմանյան բաժնային արժեթղթեր
- Այլննտրանքային ներդրումներ
- ՀՀ պետական պարտատոմսեր
- Արտասահմանյան պարտաքային արժեթղթեր
- Տեղական բաժնային արժեթղթեր

Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների գերակշիռ մասը կազմել են ՀՀ պետական պարտատոմսերը և արտասահմանյան բաժնային ներդրումային ֆոնդերը: Իրենց մեծությամբ հաջորդը եղել են դրամային կորպորատիվ պարտատոմսերն ու բանկային ավանդներն: Ներդրումների ավելի փոքր մասն են կազմել տեղական այլննտրանքային ներդրումները և տեղական բաժնետոմսերը:

**Բաժնային ակտիվների եկամտաբերությունը ընթացիկ եռամսյակում**



<sup>4</sup>2024 թվականի չորրորդ եռամսյակում գլոբալ և զարգացած երկրների բաժնետոմսերն ունեցել են համապատասխանաբար 0.9% և 0.1% անկում:


ԱՄՆ բաժնետոմսերը գրանցել են շուրջ 2.4% եռամսյակային եկամտաբերություն:

Այս եռամսյակում Պահպանողական և Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդերի արտասահմանյան բաժնային պորտֆելները, համաշխարհային

4 Աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):

շուկաներում վերջին զարգացումներով պայմանավորված, գրանցել են 0.5% և 0.9% եկամտաբերություն:

**Պարտքային ակտիվների  
եկամտաբերությունը ընթացիկ  
եռամսյակում**




<sup>5</sup>Գլխավոր ներդրումային դասի պարտատոմսերը չորրորդ եռամսյակում գրանցել են 5.1% անկում: Կայուն եկամտային, Պահպանողական և Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդերի արտասահմանային պարտքային պորտֆելների արժեքը եռամսյակի ընթացքում նվազել են 3.2% - 6.0%-ով:

Եռամսյակի ընթացքում, չնայած եվրոյի նկատմամբ դրամի որոշակի արժևորմանը, դոլարի նկատմամբ դրամի արժեզրկմամբ

պայմանավորված ընդհանուր արտարժույթային ազդեցությունը ֆոնդերի եռամսյակային եկամտաբերության վրա եղել է դրական 0.3% - 0.6%-ի չափով:

**ՀՀ պետական պարտատոմսերի  
եկամտաբերությունն ընթացիկ  
եռամսյակում**



Հայաստանի 5-10 տարի (AMGOV 5-10) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը կազմել է 2.3%, 10-20 տարի (AMGOV 10-20) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերինը՝ 1.9%, իսկ 20 տարուց ավել (AMGOV 201) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերինը՝ 1.4%:

Ֆոնդերի՝ Հայաստանի պետական պարտատոմսերի պորտֆելները

5 Աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):



հաշվետու եռամսյակում ունեցել են 1.7% - 1.8% եռամսյակային եկամտաբերություն:<sup>6</sup>

Ֆոնդերի ավանդային պորտֆելները ընթացիկ եռամսյակում գրանցել են շուրջ 2.9% եռամսյակային եկամտաբերություն:

Հայաստանի ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը, ֆոնդից կախված, տատանվել է 2.5 - 3.7% միջակայքում:


Ֆոնդերի Հայաստանի ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը կազմել է 1.6-2.3%:

Ֆոնդերի տեղական բաժնետոմսերում ներդրումները ընթացիկ եռամսյակում գրանցել են 8.7% անկում:

## 2024 թվականի տարեկան եկամտաբերությունը

2024 թվականի չորրորդ եռամսյակում պահպանված եկամտաբերության դրական միտումների շնորհիվ կենսաթոշակային ֆոնդերը տարին ամփոփել են եկամտաբերության բարձր արդյունքներով:

**2024 թվականի տարեկան եկամտաբերություն**



Ֆոնդերից Կայուն եկամտայինը ունեցել է 9.0%, Պահպանողականը՝ 11.3% եկամտաբերություն, իսկ Հավասարակշռված ֆոնդը իր 11.7% եկամտաբերությամբ 2024 թվականին գրանցել է պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգում գործող բոլոր ֆոնդերից ամենաբարձր եկամտաբերությունը:


Տարեկան եկամտաբերությանը նպաստող ամենամեծ գործոններից առաջինը ՀՀ պետական

<sup>6</sup> Աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են դրամային արտահայտությամբ:

պարտատոմսերի բարձր եկամտաբերությունն է, որը ունեցել է շուրջ 5.7% - 6.6% դրական ազդեցություն, իսկ մյուսը արտասահմանյան բաժնային արժեթղթերի եկամտաբերությունը՝ 2.9% - 4.0% ազդեցությամբ:

## Ֆոնդերի երկարաժամկետ եկամտաբերությունը


### Ֆոնդերի փայի հաշվարկային արժեքը



2024 թվականի չորրորդ եռամսյակի վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերից Կայուն եկամտայինը ստեղծման պահից ունեցել է 8.1%, Պահպանողականը՝ 7.9%, իսկ Հավասարակշռվածը՝ 8.1% միջին տարեկան եկամտաբերություն:

Վերջին հինգ տարիների միջին տարեկան եկամտաբերությունը Կայուն եկամտային ֆոնդի համար կազմել է 5.4%, Պահպանողականի համար՝ 6.4%, իսկ Հավասարակշռվածի համար՝ 6.6%:


**Ստեղծման պահից  
եկամտաբերություն**



Կենսաթոշակային կուտակումների գնողունակությունը ստեղծման պահից ավելացել է 102% - 105%-ով՝ ֆոնդերի՝ գնաճից բարձր եկամտաբերության շնորհիվ:<sup>7</sup>

2024 թվականի սեպտեմբերին կենսաթոշակային ֆոնդերը ստեղծման պահից ունեցել են 129% - 132% եկամտաբերություն: Նույն ժամանակահատվածում կուտակային գնաճը կազմել է շուրջ 27%:

**Կենսաթոշակային ակտիվների  
մեծությունը**



2024 թվականի դեկտեմբերին Ցե-Կվադրատ Ամպեգայի կողմից կառավարվող կենսաթաշակային ֆոնդերի շուրջ 394 հազար մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը կազմել է 509 միլիարդ դրամ, որից շուրջ 387 միլիարդ դրամը կազմել են հատկացումները, իսկ 122 միլիարդ դրամը՝ կառավարման արդյունքում ձևավորված եկամուտը:

<sup>7</sup> Գնաճով ճշգրտված եկամտաբերությունը հաշվարկվել է որպես կուտակային անվանական եկամտաբերության և կուտակային գնաճի տարբերություն: Որպես գնաճի ցուցանիշ հիմք է ընդունվել Հայաստանի Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված սպառողական գների ինդեքսը

## Կենսաթոշակային ֆոնդերի և հիմնական ակտիվների դասերի<sup>8</sup> Եկամտաբերություն

2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Term deposits AMD 14.4%	Government Bonds 20+ 35.5%	DM Equities 22.7%	Government Bonds 20+ 25.5%	DM Equities 26.9%	DM Equities 27%	DM Equities 12.6%	Term deposits AMD 10%	DM Equities 24.4%	Government Bonds 20+ 19.3%
Government Bonds 20+ 13.7%	Government Bonds 5-10 32.5%	Government Bonds 5-10 21.7%	Term deposits AMD 12.5%	Government Bonds 20+ 17.4%	Government Bonds 20+ 19.3%	Term deposits AMD 9.9%	Government Bonds 0-5 6.2%	Government Bonds 20+ 23%	DM Equities 19.2%
Term deposits USD 9.8%	Government Bonds 0-5 22.5%	Government Bonds 20+ 20.9%	Government Bonds 5-10 10.3%	Government Bonds 5-10 16.5%	Term deposits USD 14.1%	Government Bonds 0-5 4.4%	Government Bonds 5-10 2.4%	Government Bonds 5-10 17.1%	Government Bonds 5-10 15.2%
Government Bonds 0-5 9.1%	CQFIX 15.9%	Government Bonds 0-5 15.2%	CQFIX 8.3%	CQBAL 14.3%	CQBAL 12.7%	Government Bonds 5-10 3.2%	Government Bonds 20+ -4.1%	CQBAL 16.5%	Government Bonds 0-5 12.9%
CQFIX 7.9%	Term deposits AMD 15.3%	Term deposits AMD 14.6%	Government Bonds 0-5 7.7%	CQCON 13.8%	CQCON 11.8%	CQBAL 3.1%	CQFIX -4.5%	CQCON 16.3%	CQBAL 11.7%
Government Bonds 5-10 7.5%	CQCON 12.5%	CQBAL 14.2%	Term deposits USD 5.7%	CQFIX 10.7%	CQFIX 10.6%	CQCON 2.5%	CQCON -8.2%	Government Bonds 0-5 13.9%	CQCON 11.3%
CQCON 6.9%	CQBAL 12.2%	CQCON 14%	CQCON 4.9%	Term deposits AMD 10.6%	Term deposits AMD 10.1%	Government Bonds 20+ 0.7%	CQBAL -8.9%	CQFIX 12.6%	Term deposits AMD 9.2%
CQBAL 5.2%	DM Equities 8.4%	CQFIX 11.9%	CQBAL 4.2%	Government Bonds 0-5 9.5%	Global IG Bonds 9.2%	CQFIX 0.4%	Term deposits USD -14.5%	Term deposits AMD 10.7%	CQFIX 9.0%
DM Equities 1.6%	Term deposits USD 7.5%	Global IG Bonds 7.4%	Global IG Bonds -1.2%	Global IG Bonds 6.8%	Government Bonds 0-5 5%	Term deposits USD -4%	Global IG Bonds -16.2%	Global IG Bonds 5.7%	Term deposits USD 3.7%
Global IG Bonds -3.2%	Global IG Bonds 2.1%	Term deposits USD 6.9%	DM Equities -7.9%	Term deposits USD 4.1%	Government Bonds 5-10 3.8%	Global IG Bonds -4.7%	DM Equities -32.4%	Term deposits USD 5.1%	Global IG Bonds -1.7%

<sup>8</sup> Աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ և Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination): Աղյուսակում ներկայացված հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը՝ Government Bonds – Պետական պարտատոմսեր, Term deposits – Ժամկետային ավանդներ, Global IG Bonds – Գլոբալ պարտատոմսեր, DM Equities – Զարգացած երկրների բաժնետոմսեր:



**Շուշաննա Աղաբեյյան**

Ներդրումային Վերլուծաբան  
Ցե-Կվադրատ Ամպեգա



**Իգնատ Ֆրանգյան, CFA**

Ռիսկերի Կառավարիչ  
Ցե-Կվադրատ Ամպեգա

## Ծանուցում

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ներդրում պարունակում է ռիսկեր, ֆոնդերի եկամտաբերության նախկին ցուցանիշները չեն կարող կանխորոշել ֆոնդերի հետագա եկամտաբերությունը:

Ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշները ներառում են ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարները և ծախսերը և ենթադրում են բոլոր եկամուտների վերաներդրում:

Այս փաստաթուղթը ծառայում է բացառապես տեղեկատվական նպատակի և չի ներկայացնում որևէ հրապարակային առաջարկ ֆոնդի փայեր գնելու կամ վաճառելու: Սույն փաստաթղթում տեղ գտած տեղեկատվությունը պետք չէ դիտարկել որպես ներդրումային խորհրդատվություն:

Ընկերությունը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: